ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

24.08.2021թ. N 02/16.4/7588-2021

<<ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՒԿԱ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Ժորա ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
էլ. փոստի հասցե՝ ejmiatsin.shuka@bk.ru

Հարգելի պարոն Հովսեփյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՒԿԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի ապրիլի 28-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 710 000 000 (յոթ հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 790-Ն որոշմամբ շինարարական աշխատանքների իրականացման համար հատկացվել է 95 080 308 (իննսունհինգ միլիոն ութսուն հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ գումար:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի հուլիսի 19-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու մասին:

Ընկերության խնդրանքով 2021 թվականի հուլիսի 19-ին ուղարկված ծանուցումը (տեխնիկական խնդիրներով պայմանավորված չստանալու հիմնավորմամբ) 2021 թվականի հուլիսի 29-ին կրկին անգամ ուղարկվել է Ընկերությանը և նշվել, որ համաձայնագրի և ապահովումների ներկայացման ժամկետները մնում են անփոփոխ, այն է՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 9-ը ներառյալ:

2021 թվականի օգոստոսի 9-ին Ընկերությունը հավաստել է, որ համաձայնագիր կնքելու և ապահովումներ ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստացել է 2021 թվականի հուլիսի 29-ին և խնդրել դրանց ներկայացման ժամկետի հաշվարկն իրականացնել այդ օրվանից:

Մինչև 2021 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ (2021 թվականի հուլիսի 29-ից հաշված 15 աշխատանքային օր) Ընկերության կողմից համաձայնագիր կնքելու համար պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումների բանկային երաշխիքները չեն ներկայացվել:

Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի օգոստոսի 24-ից միակողմանիորեն լուծում է:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը 2021 թվականի օգոստոսի 24-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Հարգանքով՝

24.08.2021

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ՝ Հասմիկ Բաղինյան
Հեռ: 011621821

Գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան
Հեռ: 011621722